Swedish Institute

«Հետազոտության ոլորտում համագործակցության հնարավորությունների ընդլայնում»

“Widening opportunities for research collaborations” project

Ֆինանսավորում՝ Շվեդական ինստիտուտ /Swedish Institute/

Համակարգող՝ Լինշոպինգի Համալսարան, Շվեդիա
Linkoping University, Sweden
Ծրագրի մեկնարկ՝ Հունիսի 29, 2023

Ծրագրի տևողություն՝ 6 ամիս

Ծրագրի բյուջե՝ 995,750.00 շվեդական կրոն

ՀՊՏՀ բյուջե՝ 203,710.00 շվեդական կրոն

Ծրագրի նպատակները

«Հետազոտության ոլորտում համագործակցության հնարավորությունների ընդլայնում» ծրագրի նպատակն է բարձրացնել համալսարանի որոշումներ կայացնողների, հետազոտական ստորաբաժանումների ղեկավարների հմտություններն ու գիտելիքները հետազոտության միջազգայնացման գործընթացի և գործունեության կառավարման վերաբերյալ՝ Լինշոպինգի համալսարանի (Շվեդիա) վերահսկողության ներքո:

Ծրագրի նպատակն է նաև մշակել կառուցվածքային օրենսդրական դաշտ և դրա գործառնականացման ուղեցույցներ՝ շվեդական փորձի հիման վրա հետազոտությունների միջազգայնացման գործընթացը կառավարելու համար:

Ծրագրի գործընկերները

ՀՀ գործընկերներ՝

1. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (ՃՇՀԱՀ)
2. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Շվեդիա՝

1. Լինշոպինգի Համալսարան

LINKÖPINGS UNIVERSITET

ASUE SPECIALIZATION • EXPERIENCE • OPPORTUNITY ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

NATIONAL UNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA

KOMRAT DEVLET ÜNİVERSİTETİ 1991

Մոլդովա՝

2. Կոմրատի պետական համալսարան

Թիրախային խմբեր.

1. Համալսարանի որոշումներ կայացնողներ (ռեկտորներ և գիտության գծով պրոռեկտորներ)
2. Հետազոտական միավորի ղեկավարներ
3. Հետազոտողներ (ներառյալ երիտասարդ հետազոտողներ)
4. Համալսարանի՝ միջազգային հետազոտական գործունեության համար պատասխանատու անձնակազմ (Գիտության բաժին, Միջազգային գրասենյակ, ֆոնդահայթայթման բաժին և այլն)
5. Ակադեմիական համայնք (ուսանողներ, գործընկեր և ոչ գործընկեր բուհերի անձնակազմ)
6. Տեղական և տարածքային իշխանություններ, որոնք պատասխանատու են հետազոտական/կրթական քաղաքականության համար
7. Հետազոտության/կրթության ֆինանսավորող գործակալություններ (պետական և մասնավոր):

Գործողությունները

- 2-օրյա դասընթացներ Շվեդիայում՝ համալսարանի որոշումներ կայացնողների, հետազոտական միավորների ղեկավարների, ինչպես նաև հետազոտողների միջազգային հետազոտական գործունեության համար պատասխանատու վարչական անձնակազմի կարողությունների զարգացման վերաբերյալ:
- 2-օրյա ներհամալսարանական դասընթաց Լինշոպինգի համալսարանում (Շվեդիա) վերապատրաստված անձնակազմի կողմից հետազոտական ստորաբաժանումների ղեկավարների համար:
- Հետազոտությունների միջազգայնացման խթանման համար խրախուսական քաղաքականության մշակում յուրաքանչյուր թիրախային բուհում
- Հետազոտությունների միջազգայնացման հետ կապված գործունեության գործառնականացման ուղեցույցների մշակում
- Հետազոտողների համար ներհամալսարանական վերապատրաստում գիտական/հետազոտական համագործակցության համար պատասխանատու անձնակազմի կողմից (գիտության բաժին, միջազգային գրասենյակ, և այլն):
- Հետազոտությունների կառավարման վերաբերյալ կարճատև ակադեմիական դասընթացի մշակում՝ հատուկ ուշադրություն դարձնելով միջազգային հետազոտական համագործակցությանը:
- Իրազեկման միջոցառումներ Հայաստանում և Մոլդովայում.

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացումից ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

1. Հետազոտությունների կառավարման հմտություններով զինված համալսարանի ղեկավարություն և վարչական անձնակազմ:
2. Վերապատրաստված հետազոտողներ՝ պատրաստ իրականացնել միջազգային հետազոտական նախաձեռնություններ:
3.Ենթաօրենսդրական կարգավորման և դրա կիրառության մեխանիզմներ հետազոտությունների արդյունավետ միջազգայնացման համար:
4. Մշակված և հաստատված հետազոտությունների կառավարման կարճատև դասընթաց
5. Հետազոտության միջազգայնացման և դրա կառավարման մասին տեղեկացված ակադեմիական համայնք:

Ծրագրի ՀՊՏՀ համակարգող՝ Ներսես Գևորգյան

Հեռ.՝ +374 10-59-34-13

Էլ.հասցե՝ nerses.gevorgyan@fulbrightmail.org